ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

Գարիկ Սերոժի Մկրտչյան

Մեծ Այրումի միջնակարգ դպրոցի ուսուցիչ

ԹԵՄԱ

Իսրայել Օրին՝ որպես ազատագրական պայքարի գործիչ

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

Տիտղոսաթերթ

Ներածություն---------- 3

Գլուխ 1----------5

Գլուխ 2----------10

Եզրակացություն----------15

Գրականության ցանկ----------17

Ներածություն

Թեմայի արդիականությունը Կայանում է նրանում,որ մեր օրերում անգամ պետականություն ունենալով կանգնած ենք այն կորցնելու խնդրի առաջ և պետք է վերանայվի անցյալի սխալները,որպեսզի կարողանանք ներկա ժամանակներում ճիշտ աշխատանքներ տանել արտաքին քաղաքակաանության ոլորտում:

Աշխատանքի նպատակը Իսրայել Օրու օրինակով ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարը, նրա դերը այդ պայքարում:

Աշխատանքի խնդիրներն են հանգամանալից ուսումնասիրել հայ ազատագրական պայքարին նվիրված Իսրայել Օրու գործենությունը,կատարել վերլուծություններ և արժևորել նրա կատարած աշխատանքը:

Աշխատանքը բաղկացած է 2 գլխից,որոնցում նկարագրվում էջմիածնի գաղտնի ժողովից հետո Իսրայել Օրու ուղևորությունը Եվրոպա,նրա Հայաստանի ազատագրության «Պֆալցյան ծրագիրը»:

Իսրայել Օրու գործունեությանն անդրադարձել են մի շարք աշխատություններում,որտեղ բարձր են գնահատել նրա կատարած աշխատանքը,նա փայլուն կերպով կարողացել է ներկայացնել Հայաստանի ազատագրության «Պֆալցյան» և «Մոսկովյան» ծրագրերը:

Աշխատանքը գրելիս օգտվել եմ Ա.Գ.Աբրահամյանի «Իսրայել Օրի»,Վ.Ա.Պարսամյանի «Ռուսաստանը և Հայ ժողովրդի պատմական բախտը»,Հայ ժողովրդի պատմություն,հատոր 4,Պետրոս Հովհաննիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական շարժումները»(XV դարի կես XVIII դարի վերջ),Լենդրուշ Խուրշուդյանի «Հայկական հարցը»,Հ.Գ.Ժամկոչյանի «Հայ ժողովրդի պատմությունը» աշխատություններից,որտեղ անդրադարձել եմ Իսրայել Օրու ծավալած գորունեությանը,թե Եվրոպայում, թե Ռուսաստանում:

Ինչպես տեսնում ենք Իսրայել Օրու Հայաստանի ազատագրությանը նվիրված գործունեությանը անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ,որոնց աշխատությունները մեկը միյուսին փոխլրացնում են,և ուսումնասիրելով և համադրելով

նշված աշխատանքները հնարավորություն ենք ստանում համակողմանի ուսումնասիրել Օրու գործունեությունը հայ ժողովրդի ազատագրության գործում:

Գլուխ 1.Իսրայել Օրու «Պֆալցյան» ծրագիրը

Օգտվելով վերոնշյալ աղբյուրներից ստորև ուսումնասիրելու և անդրադառնալու էնք Իսրայել Օրու գործունեությանը« Պֆալցյան» ծրագրի շրջանակներում:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն Օրին Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ Արևմուտք հղված պատվիրակության անդամներից՝ Մելիք Իսրայելի որդին էր,որն ուղեկցել էր իր հորը:Ըստ այդ վավերագրերի ,տակավին 18-19 տարեկան պատանի Օրին,կաթողիկոսի մահից հետո անցնում է Արևմուտք,շուրջ երեք տարի դեգերում է Վենետիկում,ապա զբաղվում ֆրանսիական բանակի մատակարարման գործով,որոշ ժամանակ իբրև կամավոր ծառայում ֆրանսիական բանակում և գերի ընկնում Նամյուրում,երբ այդ քաղաքը անձնատուր եղավ անգլիացիներին(1695): Գերությունից ազատված Օրին անցնում է Հռենոսյան Պֆալց և Հովհան Վիլհելմ կուրֆյուրստի մոտ՝Դյուսելդորֆ քաղաքում չորս տարի վարում է մատակարարման կոմիսարի պաշտոն[4;129]:

Ա.Աբրահամյանը անդրադառնալով Օրու գործունեությանը նշում է.«Օրին ֆրանսիական բանակում ծառայած ժամանակ աչքի է ընկել իր քաջագործություններով:Այդ մասին է վկայում Պֆալցի Կուրֆյուրստի՝ Սյունիքի Մելիքներին ուղարկած գրության մեջ հաղորդված մի տեղեկություն,ուր նա խորհուրդ է տվել մելիքներին առանձնահատուկ ուշադրություն դարձնել Օրիի վրա և այդ կապակցությամբ մատնացույց արել նրա քաջագորությունները.«Բարձրացրեք պարոն Իսրայել Օրիին,-գրել է կուրֆյուրստը,-նա մեզ մոտ տեղի ունեցող պատերազմական գործողություններին մասնակցած և վարժված մեկն է:Մենք ճշմարտապես տեսել և իրազեկ ենք նրա մեր բանակում ցույց տված քաջագործություններին,վստահեցեք իրեն:Տասը տարի է ինչ նա վարժված է մեր կռվում:Պարոն Իսրայելը Աստուծով,կարող է ձեր փափագը տեղին կատարել:Այս ճշմարտությունը իմացեք մեր իշխանությունից»[1;40]:Մեջբերումներից հասկանում ենք,որ Օրին Եվրոպա անցնելուց հետո հմտացել է ռազմական գործի մեջ և իր կարողությունները փորձել է ծառայեցնել ի նպաստ հայրենիքի ազատագրությանը և մեծ մասամբ նա գիտակցում էր,որ կարող է

այդ ժամանակաշրջանում տիրող իրավիճակը օգտագործել ի օգուտ հայրենիքի,ինչի մասին էլ վկայում են ստորև բերվող մեջբերումները.

Ըստ վերոնշյալ աղբյուրների Պֆալցն այդ ժամանակ մասնակցում էր Ավստրիայի գլխավորությամբ Թուրքիայի դեմ մղվող պատերազմին,որին մասնակցում էին նաև Կենտրոնական Եվրոպայի պետությունները և Ռուսաստանը:Այդ էր պատճառը,որ Կուրֆյուրստը և նրա դաշնակիցները շահագրգռված էին սիրաշահելու Մերձավոր Արևելքի քրիստոնյա այն ժողովուրդներին,որոնցից օժանդակություն կարող էին ստանալ այդ պատերազմում:Օգտվելով հանգամանքից,կուրֆյուրստի հետ ունեցած իր հանդիպումների ժամանակ,Օրին նրան ներշնչում է այն միտքը,որ իրենց ազատագրության համար Իրանի և Թուրքիայի դեմ պայքարող Հայաստանն ու Վրաստանը բնական պատվար ու դաշնակից են Թուրքիայի դեմ պատերազմող Եվրոպական պետություններին և ռազմական ոչ մեծ օժանդակությամբ դժվար չի լինի կորզել Հայաստանը՝ իր օրհասն ապրող Իրանի ճանկերից և կուրֆյուրստին բազմեցնել Հայոց գահին:Սրա հետ մեկտեղ մոլեռանդ կաթոլիկ կուրֆյուրստին և նրա արքունիքում վխտացող ճիզվիտ կրոնավորներին Օրին կարողացավ հավատացնել,թե իր ազատությունը երազող հայ ժողովուրդը պատրաստ է նետվելու կաթոլիկ եկեղեցու գիրկը[4;129]:

Անդրադառնալով այս թեմային Հ. Ժամկորյանը նշում է.«Հովհան Վիլհելմը տալիս է իր համաձայնությունը,բայց պահանջում է,որ հայերի կողմից այդ մասին լինի գրավոր դիմում և համաձայնություն:Քանի որ Օրին իր մոտ այդպիսի դիմում չուներ անհրաժեշտ էր մեկնել Հայաստան»[2;663]:

Պ.Հովհաննիսյանը գրում է «1699թ. Իսրայել Օրին մեկնեց Հայաստան՝ իր հետ ունենալով մեծ իշխանի համապատասխան գրություններ՝ուղղված Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսներին,Հայոց մելիքներին և վրաց Գեորգի XI թագավորին»[5;26]:Ըստ Հ.Ժամկոչյանի.«Իսրայել Օրին փորձեց այդպիսի գրություն վերցնել նաև ավստրիական կայսր Լեոպոլդ I –ից և Տոսկանայի դուքս Կոզմաս III-ից»[2;663]:

Հ.Ժամկոչյանը անդրադառնալով այս թեմային գրում է.« Ֆլորենցիայում Կոզմաս III-ը տվեց իր համաձայնությունը:Վիեննայում, սակայն, Օրուն հասկացրին,որ Լեոպոլդ կայսրը չի կարող Հայաստանի ազատագրության մասին հանձնարարական տալ՝ նկատի ունենալով իր համար ստեղծված քաղաքական բարդ իրադրությունը:

Օրին նույն թվականի գարնանը Թուրքիայի վրայով մեկնեց հայրենիք:Ճանապարհին նա եղավ Կոստանդնուպոլսում,տեսակցեց Հայոց պատրիարքի հետ,վերջինիս օգնությամբ բարեհաջող հասավ Կարին,իսկ այնտեղից էլ Էջմիածին»[2;663]:

Ա.Աբրահամյանը գրում է.«1699թ ապրիլի 4(հին տոմարով)Օրին հասնում է Էջմիածին:Այդ ժամանակ Էջմիածնում գահակալում էր Նահապետ կաթողիկոսը(1691-1705):Օրին ինչպես երևում է խուսափում է կաթողիկոսի հետ հանդիպում ունենալուց:Իրականությանը չի համապատասխանում պատմագիտության մեջ քաղաքացիություն ստացած այն կարծիքը,որ իբրև թե Օրին ցանկացել է հանդիպել Նահապետ կաթողիկոսին,բայց նրանից կտրուկ մերժում է ստացել:Պատմական աղբյուրներում նման տեղեկություններ չկան»[1;48]:

Այս ժամանակահատվածում լուրջ դերակատարություն ունեին Արցախի և Սյունիքի մելիքները:Եկեղեցական և առևտրական հասարակախավերից հետո մելիքությունը դառնում էր հայ ազատագրական շարժումը կազմակերպող երրորդ ուժը,որի վկայությունն է Անգեղակոթի գաղտնի ժողովում նրանց վերապահված դերը:Ուսումնասիրելով վերոնշյալ նյութերը կարելի է ենթադրել,որ հայ աշխարհիկ և հոգևոր դասերը համատեղ չէին գործում:

Հայ Մելիքների այդ ժողովը հրավիրվել է 1699թ. Ապրիլի 9-ին՝Անեղակոթի մելիք Սաֆրազի ապարանքում:Ժողովին մասնակցել են Սյունիքի և Արցախի մելիքներ և հոևորականության որոշ ներկայացուցիչներ[5;27]: Ըստ տեղեկությունների, ժողովին մասնակցել են հետևյալ տասը մելիքները.Հայկազի որդի Փիլիպոս,Ասատուրի որդի Սարուխան,Մելքոնի որդի Սաֆրազ,Պաղտասարի որդի Մելքոն,Նարինբեկի որդի Շահնազար,Պահումի որդի Մելքոն,Պաղտասարի որդի Թադևոս,Յավրի որդի աղաջան,նավի որդի Հովհաննես և Շահինի որդի Սուքիաս:Անհավանական չէ,որ նրանցից ոմանք եղած լինեն ղարաբաղցիներ,վայոցձորցիներ ու ղափանցիներ[1;52]:

Ինչպես նկատում է Վ.Պարսամյանը.«Այստեղ Օրին ականատե է լինում ժողովրդի մեջ եղած ազատագրական բուռն ցանկություններին,Ռուսաստանի նկատմամբ ունեցած ջերմ վերաբերմունքին,Հայաստանի ազատարությունը Ռուսատանի հետ կապելու տրամադրություններին»[6;8]:

Օրիին աջակցելու համար գործընկեր է տրվել Ս. Հակոբ վանքի վանահայր Մինաս Վարդապետը:Մելիքները Օրիին են հանձնել իրենց կնիքներով հաստատված և ստորագրված սպիտակ թղթեր՝ ըստ նպատակահարմարության օգտագործելու:Այս թղթերի վրա էլ հետագայում գրվում են մելիքների չորս կարևոր դիմումները՝ պապին,Ավստրիայի Լեոպոլդ կայսրին,Պֆալցի կուրֆյուրստին և Պետրոս առաջնին,իսկ հետագայում այդ թղթերն օգտագործում են,այլ գրություններ կազմելու համար[1;52]:Մելիքների դիմումագրերով և Տիգրանյանցի ուղեկցությամբ 1699թ.-ի ապրիլի 29-ին Իսրայել Օրին մեկնում է Եվրոպա՝ հայ-արևմտաեվրոպական բանակցությունները շարունակելու[5;29]:Օրին Դյուսելդորֆ վերադարձավ 1699 թ. Սեպտեմբերին և Պֆալցի կուրֆյուրստին ներկայացրեց Ղարաբաղի մելիքների խնդրագիրը,իր զեկուցագիրն ու ռազմական արշավի ծրագիրը:Այդ վավերագրերից ամենաուշագրավը,անշուշտ,Հայասստանի ազատագրման համար կազմակերպվելիք ռազմակաան արշավի 36 կետերից կազմված ծրագիր-զեկուցագիրն է[1;59]:Ծրագրի համաձայն եվրոպական երեք երկրներ՝ Ավստրիան,Տոսկանան և Պֆալցը Հոմի պաապի աջակցությամբ կազմելու էին հակաթուրքական եռյակ դաշինք:Միավորելով իրենց ռազմական ուժերը դաշինքի երկրները արշավանք էին սկսելու դեպի Հայաստան անշուշտ նախապես ապահովելով ինչպես Լեհաստանի,այնպես էլ Ռուսաստանի համաձայնությունը:Այս համոզմունքն ուներ քաղաքական հիմք՝ նկատի ունենալով վերջին երկու երկրների շեշտված հակաթուրքաական դիրքոշումը[5;29]:

Կուրֆյուրստը արշավանքի համար կազմակերպվող բանակին պետք է տրամադրեր հազար հեծյալ,հազաար դրագուն,հազար գրենադեր զինվորներ,քսանհինգ թնդանոթ,քսանհինգ մբաձիգ,չորս վեց տրամաչափի թնդանոթ,երկու տասներկու տրամաչափի թնդանոթ,հիգ հարյուր պատրույգավոր հրացան,վառոդ և այլն:

Զորաբանակը պետք է շարժվեր 1700 թվականին մայիսի վերջերին՝ անցնելով Բոհեմիայի,Լեհաստանի ու Ռուսաստանի վրայով[1;60]:Ամբողջ Արևելյան Հայաստանի ազատագրման համար Օրին նախատեսում էր ընդամենը 20-25 օր,որը հնարավոր է համարվում հաշվի առնելով,այստեղ պարսկական ռազմական ուժերի սակավություն ու թերզինվածությունը և ուխտակից բանակների կազմակերպվածություն ու տեխնիկան:Կարևոր գործոն էր նաև հայերի խանդավառությունն ու կամքը:Թերևս չափազանցություն էր միայն հայ ապստամբական ուժերի թվաքանակը,որը չեր արտահայտում իրական վիճակը[5;30]:

Իսրայել Օրին և Մինաս Վարդապետը 1700 թ.իրենց մշակած ծրարիրը ներկայացրեցին կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին:Սա տվեց իր համաաձայնությունը և առաջարկեց ձեռնամուխ լինել ծրագրի իրականացման գործին:Կուրֆյուրստի հանձնարարականներով Օրին նորից մեկնեց Ֆլորենցիա և Վիեննա՝ Լեոպոլդ առաջինի և Կոզմաս III-ի համաձայնությունը ստանալու համար:

Ֆլորենցիայում Տոսկանայի դուքսը տվեց իր համաձայնությունը և խոստացավ զորք ու ռազմական հանդերձանք տրամադրել:Սակայն Վիեննայում Օրին հաջողություն չունեցավ:Լեոպոլդ կայսրը հրաժարվեց Հայաստանի ազատարման գործին մասնակցելուց:Այսպիսով Օրու ծրագիրը տապալվեց:

Եվրոպական այդ երկու խոշոր պետությունների՝ Ֆրանսիայի և Ավստրիայի համար XVII դարի վերջերին ստեղծված միջազգային, քաղաքական իրադրությունն այդքան էլ ոգևորիչ չէր,որ նրանք հայերի պատճառով բախվեին Պարսկաստանի և Թուրքիայի հետ:Լյուդովիկոս XIV և Լեոպոլդ I-ը վիճում էին իսպանական գահի համար և պատերազմի էին պատրաստվում:Այս պատճառով Ֆլորենսիան,որը Թուրքիայի հետ լավ հարաբերությունների մեջ էր և վերջինիս միշտ հրահրում էր ընդդեմ Ավստրիայի,չէր ուզում իր դեմ հանել նրան,իսկ Պարսկաստանում ֆրանսիաան ուզում էր ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել՝ հաշտեցնելու համար իր միսիոներների և առևտրականների գործունեությունը,որոնց հետ հաջող կերպով մրցում էին հայ առևտրականները:Ավստրիան ևս իր նկատառումներն ուներ:Նա նոր էր ավարտել Թուրքիայի դեմ պատերազմը և չէր ուզում նորից ընդհաարվել նրա հետ,մանավանդ,որ

պատերազմի էր պատրաստվում ֆրանսիայի դեմ:Կար մի պատճառ ևս Հայաստանը շատ հեռու էր Արևմտյան Եվրոպայից և նրանց միջև ընկած էին այնպիսի երկրներ,որոնք չէին հանդուրժի ոչ ֆրանսիական և ոչ էլ ավստրիական բանակների անցումներն իրենց տարածքով[2;667]:

Ուսումնասիրելով վերոնշյալ հեղինակների մեջբերումները,պարզ է դառնում,որ Եվրոպան ցանկություն չուներ աջակցելու Իսրայել Օրու Հայաստանի ազատագրության ծրագրին և այդ է պատճառը,որ նա կողմնորոշվեց դեպի Ռուսաստան:

Գլուխ 2.Իսրայել Օրու Մոսկովյան ծրագիրը և Ռուսաստանը

Այժմ ծանոթանանք Իսրայել Օրու Մոսկովյան ծրագրին:

XVIII դարի արշալույսին,1701 թվականին,Իսրայել Օրին իր ընկեր և զինակից Մինաս Տիգրանյանցի հետ,Վիեննայից Լեհաստանի վրայով ուղևորվում է Մոսկվա:Լեհաստանում,որպես թարգմանիչ,նրանց միանում է լեհահայ Նազար Օրեխովիչը:

1701թ. Հուլիսի 7-ին նրանք հասնում են Մոսկվա և բանակցություններ վարում կանցլեր Գոլովինի հետ:Վերջինս հանձնարարում է գրավոր ներկայացնել իրենց պահանջներն ու ծրագրերը[6;9]:

Օրին իր հետ Մոսկվա էր բերել Պֆալցի կուրֆյուրստի գրությունը Պետրոս I-ին,որի մեջ նա հայտնում է,թե Հայաստանի աչքի ընկնող և իշխանավոր մարդիկ իր մոտ պատգամավոր են ուղարկել Իսրայել Օրիին,որը Պոշյան իշխանական տան շառավիղն է և նրա միջոցով իրենց ազատագրության համար օգնություն ն խնդրել.«Եթե Ձերտ մեծությունը հայերի այս խնդիրը իրագործելի համարի,մենք օգնություն կտանք մեր և մեր դաշնակիցների միջոցով»:

Հանձնարարական մի գրություն Օրին ուներ նաև Ավստրիայի Լեոպոլդ կայսրից,որի մեջ նա գովեստով է խոսել Իսրայել Օրիի մասին որպես եվրոպական արքունիքներում ճանաչված ու հարգված անձնավորություն և խնդրել է ցարին«բարեհաճ ընդունելություն» ցույց տալ նրան[1;67]:

Ընդամենը տասն օրվա ընթացքում Օրին մշակեց և ցարական արքունիք ներկայացրեց Հայաստանի ազատագրության միանգամայն նոր ծրագիր,որը հայտնի է «Մոսկովյան ծրագիր» անունով:Այն Պետրոս I-ին ներկայացվեց հուլիսի 25-ին:Ծրագիրը բաղկացած էր 18 կետից[5;35]:

Այս ծրագրի համաձայն հայաստանի ազատագրությունը պետք է կատարվեր Ռուսաստանի զինական օգնությամբ:Ռուսաստանը պետք է Անդրկովկաս ուղարկեր 25 հազարանոց մի զորաբանակ,որից 15 հազար հեծյալ,10 հազար հետևակ[6;9]:Այն Աստրախանի ծովով պիտի հասներ Անդրկովկաս,իսկ 15 հազարը Հյուսիսային Կովկասից Դարիայի կիրճով պետք է մտներ Վրաստան,որտեղ ռուսական զորքերին պիտի միանային վրացական մի քանի տասնյակ հազար զինվորներ և շարժվեին դեպի Արևելյան Հայաստան:Ռուսական,հայկական և վրացական զորքերը 10-15 օրվա ընթացքում պիտի ազատագրեին ամբողջ Արևելյան Հայաստանը[3;668]:

Ռազմական գործողությունների ավարտից հետո թագավորական զորքերը պետք է ձմեռեին Հայաստանում:Ձմռանը ռազմական գործողություններ չէին կարող ծավալվել,քանի որ լեռնրը ծածկվու էին ձյան հաստ շերտով,և պարսկական կառավարությունը իվիճակի չէր լինելու բանակի տեղաշարժեր կատարել:Օգտվելով այդ դադարից,հայ ավագանին Արևելյան Հայաստանի 17 շրջաննրի բնակչությունից արագ պետք է հավաքագրեր և կազմակերպեր 116-հազարանոց մի բանակ:Օրին հավաստիացնում էր արքունիքին,որ Հայաստանում տեղի ունեցող ռազմական գործողությունների լուրը երբ հասնի Թուրքիայի գերիշխանության տակ գտնվող հայերին,այնտեղից օգնություն կարող են գալ 60.000 հայեր:Տեղական զորքերին,ըստ Օրիի,միանալու էին նաև դաշնակից վրացական ուժերը՝30.000 զինվորներով:

Պարսկական իշխանությունները, գրել է Օրին,Հայաստանը,Վրաստանը կորցնելուց հետո մյուս երկրամասերից կարող են կազմել,ոչ ավելի,քան 20.000 հոգուց բաղկացած

մի զորաբանակ,որի մի մասը նրանք հարկադրված կպահեն բուխարացիների,այսինքն ուզբեկների դեմ,իսկ ուրիշ վայրերից զորքեր ետ քաշել չեն կարող[1;76]:Հետազոտությունից պարզ է դառնում,որ նշված ծրագիրն իրագործելու համար Օրին բավարար չափով չէր ուսումնասիրել իրավիճակը Արևելյան և Արևմտյան Հայաստանում:Նախ չենք կարող համոզվել,որ Հայաստանում արագ կհավաքագրվեր 116-հազարանոց բանակ,ինչպես նաև երաշխիք չկար,որ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերից,կամ հարևան Վրաստանից համապատասխան օգնություն կգար:

Օրին ծրագրին կցել էր Հայաստանի և հարևան երկրների ձեռանկար քարտեզը,որպեսի ռուսական ռազմական գործիչներն առավել առարկայական պատկերացումներ ունենային Հայաստանի ճանապարհների,քաղաքների,բերդերի տեղանքների և տեղագրության մասին:Ծրագիրն ու քարտեզը խիստ հետաքրքրեցին Պետրոս Մեծին և նա ցանկություն հայտնեց անձամբ բացատրություններ ստանալ հեղինակից:Պետրոս Ի-ի և Օրու առաջին տեսակցությունը տեղի ունեցավ 1701թ. Հոկտեմբերի 7-ին իշխան Գոլովինի պալատում[5;37]:Ցարը որոշակի հայտնում է,որ ինքը ուզում է ընդառաջել հայերի խնդրանքին,միայն այդ հնարավոր կլինի Շվեդական պատերազմը վերջացնելուց հետո:

Ցարական արքունիքի հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած սիրալիր վերաբերմունքը բխում էր,իհարկե ցարական արքունիքի՝արևելքում հետապնդած շահերից.Ռուսատանը ցանկանում էր ամրանալ Կասպից ծովի ափերին,ձեռք բերել Շամախու և Գիլանի մետաքսի շահաբեր շրջանները,ընդարձակել իր քաղաքական ազդեցության ոլորտը Արևելքում և Մերձավոր Արևելքը Արևմտյան Եվրոպայի հետ կապող առևտրական ուղին փոխադրել Վոլգայի վրա[1;79]:Մեջբերումից կարող ենք եզրակացնել,որ ցարական արքունիքը հետաքրքրված էր Օրու ծրագրերով,քանի որ տարածաշրջանի նկատմամբ ուներ հետաքրքրություններ և Օրու հաղորդած տվյալները կարող էին պիտանի լինել,ինչպես և հետագայում դա հաստատվեց:

Պետրոս Ի-ի դրական վերաբերմունքն ու խոստումները մեծ ոգևորություն են առաջ բերում հայ պատվիրակների մոտ:1702թ. գարնանը Մոսկվայում ապրող հայ

զինվորական Միրոն Վասիլևի միջոցով Օրին և Մինաս Վարդապետը նամակներ են ուղարկում Ղարաբաղի մելիքներին,Գանձասարի և Էջմիածնի կաթողիկոսներին,հայտնում իրենց բանակցությունների հաջող արդյունքների մասին,հանձնարարում նախապատրաստվել և սպասել իրենց:Միրոն Վասիլևը մեծ դժվարություններ հաղթահարելով,գալիս է Անդրկովկաս,կատարում Օրու գրավոր և բանավոր հանձնարարությունները[6;11]:

Սակայն Միրոն Վասիլևը 1703թ.դատարկաձեռն վերադարձավ Մոսկվա:Ստեղծված դրությունից դուրս գալու նպատակով Մինաս Վարդապետն ու Օրին օգտագործեցին Անգեղակոթի ժողովի կողմից նրանց տրված մաքուր թղթերը:Նրանք Մելիքների անունից մի դիմում կազմեցին և ներկայացրին Պետրոս Ի-ին:

Պատմագիտության մեջ այդ դիմումը համարվել է կեղծիք:Սակայն Օրու և Մինաս Վարդապետի նկատմամբ այդպիսի մեղադրանքն իրավացի չէ:Նրանք կատարել էին այն ինչ իրավունք էր տվել Անգեղակոթի ժողովը:Հայաստանում տեղի ունեցած հետագա դեպքերն արդարացրին Իսրայել Օրու վարքագիծը:Թե մելիքները,թե Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը,որ կաթողիկոս ընտրվելու օրից՝1703 թ. սկսած դարձավ ազատագրական պայքարի անխոնջ մարտիկներից մեկը,նորանոր դիմումներ հղեցին ռուսական պետությանը՝ հայերին օգնելու և Հայաստանն ազատագրելու խնդրանքով[2;669]:Նշված աղբյուրը փաստում է,որ Հայաստանում պատրաստ չէին ընդունելու վերը առաջ քաշած մարտահրավերները,իս այստեղ կարևոր է ընդգծել Օրու որպես բանակցողի հմուտ լինելը,քանի որ նա կարողացավ ճիշտ օգտագործել Անգեղակոթի ժողովում ստորագրած թղթերը:

Օրին դիմում է Պետրոս Ի-ին՝ որպես դեսպան Պարսկաստան գնալու,երկրի քաղաքական դրությանը մոտիկից ծանոթանալու,իրենց ծրագրի կենսագործումը նախապատրաստելու նպատակով:Պետրոս Ի-ը հավանություն է տալիս Օրու ծրագրին,նրան շնորհում է գնդապետի աստիճան՝իր հայրենակիցների մեջ ռազմական գործը հաջողությամբ կազմակերպելու և գլխավորելու համար:

1707թ.հուլիսին Օրու գլխավորած դեսպանությունը ուղևորվում է Աստրախան:

1708թ.փետրվարին դեսպանությունը Աստրախանից նավով գալիս է Շամախի:Շամախիի խանը թույլ չի տալիս շարունակել ճանապարհը,պատճառաբանելով,թե շահից թույլտվություն չունի:

1709թ.ստացվում է Հուսեին շահի թույլտվությունը.դեսպանությունը ճանապարհվում է Սպահան:Շահը Ռուսաստանի թագավորի և Հռոմի պապի բանագնաց Իսրայել Օրուն առերես ընդունում է պատշաճ ձևականությամբ և պատվով,բայց խիստ հսկողության տակ է պահում և աշխատում որքան կարելի է շուտ ճանապարհել[6;13]: Շարունակելով ուսումնասիրությունը այստեղ կարևորվում է Օրու քայլը,ով ցանկանում էր մոտիկից ծանոթանալ իրավիճակին,որպեսի ճիշտ կազմակերպեր հետագա անելիքները:

1709թ.Օրին Սպահանից ետ վերադարձավ:

1711թ. Օգոստոսի վերջերին տեղի ունեցավ անսպասելին՝ ուժերի ծաղկուն շրջանում,50 տարեկանում,կասկածելի ու մութ հանգամանքներում Աստրախանում հանկարծամահ եղավ հայ ազատագրական շարժման անխոնջ ու եռանդուն գործիչը:Եսայի կաթողիկոսը Աստրախանի հայկական եկեղեցու բակում կատարելով Օրու թաղման կարգը՝ձեռնունայն վերադարձավ Արցախ:

Պատվիրակության փաստաթղթերն ու իրերը ցիրուցան եղան և անհետացան:Օրու մահվան մասին Պետրոս I-ը իմացավ Կազանի նահանգապետ Պ.Մ.Ապրակսինի՝ցարին ուղղված 1711թ.նոյեմբերի 7-ի գրությունից:Օրու մահվանից ուղիղ 11 տարի անց՝1722թ. Պետրոս I-ը վերջապես կազմակերպեց պարսկական արշավանքը,բայց այդ արշավանքը չունեցավ այն արդյունքը,որի համար ապրել և պայքարել էր ազատագրական շարժման նշանավոր գործիչն ու հայ մտածողը[5;41]:

Եզրակացություն

Ամփոփելով Իսրայել Օրու գործունեությունը նվիրված հայ ժողովրդի ազատագրության գործում՝ կարևոր է ընդգծել,որ նա մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց իր ձեռնարկած նպատակին,պայքարեց անկախ հայրենիք ունենալու համար:

Ինչպես նաև ուսումնասիրելով վերոնշյալ հեղինակների աշխատանքները նվիրված Օրու «Պֆալցյան» և «Մոսկովյան» ծրագրերին և այն ի մի բերելով նշված աշխատանքի մեջ կարելի է անել մի շարք եզրահանգումներ.

Անցնելով Եվրոպա Օրին նախ հմտանում է ռազմական գործի մեջ,որն էլ օգտագործում է հայրենիքի ազատագրության նպատակով:

Հասկանալով տեղի ունեցող աշխարհաքաղաքական վիճակը քայլեր է ձեռնարկում այն օգտագործելու ի նպաստ հայրենիքի:

Եվրոպան շահագրգռված չէր հայերի համար բախվելու Սասանյան Պարսկաստանի,կամ օսմանյան թուրքերի հետ:Այս մասին հասկանալով ի վերջո նա կողմնորոշվում է դեպի Ռուսաստան

Ռուսաստանը զբաղված էր Հյուսիսային պատերազմով,ճիշտ է նրա շահերը համընկնում էր Անդրկովկաս արշավելու հայերի ծրագրին,սակայն նրա մտադրությունը ոչ թե հայ ժողովրդի ազատագրության խնդիրն էր,այլ Անդրկովկասը նվաճելու նպատակները:Դա է փաստում նաև Պետրոս I-ի հետաքրքրությունը Իսրայել Օրու ներկայացրած քարտեզների և տվյալների վերաբերյալ:

Իսրայել Օրու կարևոր քայլերից մեկն էլ այն էր,որ նա երկու դեպքում էլ ցանկացավ մոտիկից իրավիճակին ծանոթանալ,որպեսի հետագա գործողությունները ճիշտ կազմակերպի:Սակայն ինչպես տեսնում էնք,նա 1711 թ.անակնկալ մահացավ,ինչը նույնպես ուշադրության պետք է արժանանա:

Այնուամենայնիվ Օրին մեծ գնահատանքի պիտի արժանանա յուրաքանչյուր հայի կողմից,քանի որ որոշ թերություններով հանդերձ նա կարողացավ գործնական հունի մեջ դնել հայ ժողովրդի ազատագրական պայքարը:

Ի վերջո հանգամանալից ուսումնասիրելով Իսրայել Օրու գործունեությունը պետք է յուրաքանրյուր հայի համար պարզ լինի,որ ոչ Եվրոպան և ոչ էլ Ռուսաստանը ոչնչով օգնել չեն կարող,եթե հայերս չցանկանանք և չհամախմբվենք միասնական ամուր պետություն ունենալու գաղափարի շուրջ:

Գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա.Գ,«Իսրայել Օրի»,Երևան,1978թ.,127 էջ,

2. Ժամկոչյան,Հ.Գ, «Հայ ժողովրդի պատմություն»,Երևան,1975թ.,783 էջ,

3. Խուրշուդյան,Լենդրուշ«Հայկական հարցը»,Երևան,1995թ.,100 էջ,

4. Հայ ժողովրդի պատմություն,ՀԽՍՀ,ԳԱ հրատ.,հ IV,Երևան,1972թ.,682 էջ,

5. Հովհաննիսյան Պետրոս «Հայ ազատագրական շարժումները»(XV-րդ դարի կես XVIII դարի վերջ),116 էջ,

6.Պարսամյան Վ.Ա,«Ռուսաստանը և հայ Ժողովրդի պատմական բախտը»,Երևան,1978.,183 էջ.: